Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 24-ի N 1700 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ) ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հանրային իշխանության մարմինների (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների) պաշտոնատար անձանց ծառայողական և այդ մարմիններին սպասարկող ավտոմեքենաների տարեկան պահպանման բազային ծախսի չափը (այսուհետ՝ պահպանման բազային ծախս) հաշվարկվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան միջոցները նախատեսվում են սույն հավելվածով սահմանված նորմաներին և կարգին համապատասխան՝ բյուջետային ֆինանսավորման հայտով ներկայացված պահանջի առկայության դեպքում:

2. Ավտոմեքենաների պահպանման ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվում են հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող համապատասխան ծրագրային միջոցառումների ծախսերում և ըստ ծախսային բաղադրիչների՝ հատկացվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հետևյալ հոդվածներով՝

1) 4212 - «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով՝ էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի կուտակչային մարտկոցի լիցքավորման հետ կապված էլեկտրաէներգիայի ծախսը.

2) 4252 - «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով՝ ավտոմեքենայի պահպանման ընթացիկ նորոգման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման ծախսերը.

3) 4264 - «Տրանսպորտային նյութեր» հոդվածով՝ ավտոմեքենայի շահագործման համար անհրաժեշտ վառելանյութի, յուղերի և ավտոմեքենաների համար այլ նյութերի (ապրանքների) ձեռքբերման ծախսերը.

4) 4823 - «Պարտադիր վճարներ» հոդվածով՝ ավտոմեքենաների շահագործման հետ կապված օրենսդրությամբ նախատեսված պարտադիր վճարների, այդ թվում՝ ավտոմեքենաների տեխնիկական զննության վճարի և բնապահպանական հարկի ծախսերը:

3. Ավտոմեքենաների պահպանման ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների նախատեսվում են հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով հաստատված դասակարգումները:

4. Ավտոմեքենայի պահպանման բազային ծախսը հավասար է սույն հավելվածի 2-րդ կետում նշված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով նախատեսված տրանսպորտային ծախսերի հանրագումարին:

5. Ավտոմեքենայի պահպանման բազային ծախսի տարեկան նորմայի հաշվարկման համար հիմք են ընդունվում հետևյալ հաշվարկային տվյալները՝

1) առաջիկա տարվա ընթացքում աշխատանքային օրերի քանակը.

2) օգտակար ծառայության ժամկետում գտնվող և օգտակար ծառայության ժամկետը լրացած ավտոմեքենաների կողմից օրական ծախսվող վառելանյութի ծավալը.

3) օրական էլեկտրաէներգիայի ծախսը՝ էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենաների համար.

4) գինը՝ առաջիկա բյուջետային տարվա համար կանխատեսվող բենզինի գինը կամ էլեկտրաէներգիայի լիցքավորման միջին շուկայական սակագինը:

6. Պահպանման բազային ծախսը տարբերակված սկզբունքով հաշվարկվում է օգտակար ծառայության ժամկետում գտնվող և օգտակար ծառայության ժամկետը լրացած ավտոմեքենաների համար:

7. Ավտոմեքենաների պահպանման ծախսերը հաշվարկվում են՝ հաշվի առնելով ավտոմեքենայի՝ օգտակար ծառայության ժամկետում գտնվելու կամ օգտակար ծառայության ժամկետը լրացած լինելու հանգամանքը և հիմք ընդունելով համապատասխանաբար հաշվարկված պահպանման բազային ծախսի չափերը:

8. Այն դեպքում, երբ բյուջետային տարվա ընթացքում մարմնին հատկացվում է օգտակար ծառայության ժամկետի մեջ գտնվող ավտոմեքենա, ապա դրանով պայմանավորված բյուջետային ծախսերի վերահաշվարկը դիտարկվում է առաջիկա տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում:

9. Ընդամենը տրանսպորտային նյութերի գծով ծախսերում վառելանյութի ծախսը կազմում է 90%, իսկ ավտոմեքենաների համար օգտագործվող յուղերի և այլ նյութերի (ապրանքների) ձեռքբերման ծախսը՝ 10%: Յուղերի և այլ նյութերի (ապրանքների) ծախսը վառելանյութի նկատմամբ կազմում է 11%:

10. Ընդամենը տրանսպորտային նյութերի գծով տարեկան ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևերի միջոցով՝

1) ՎԾ = Վ x Օր x գին, որտեղ՝

ՎԾ-ն վառելանյութի տարեկան ծախսն է (դրամ),

Վ-ն՝ օրական ծախսվող վառելանյութի ծավալը (լիտր),

Օր՝ աշխատանքային օրերի քանակը տարվա ընթացքում.

2) Ն = ՎԾ x 11%, որտեղ՝

Ն-ն՝ յուղերի և այլ նյութերի (ապրանքների) ձեռքբերման տարեկան ծախսն է (դրամ),

3) ՏՆ = ՎԾ + Ն, որտեղ՝

ՏՆ-ն՝ տրանսպորտային նյութերի գծով տարեկան ծախսն է (դրամ):

11. Պահպանման բազային ծախսի մյուս ծախսային բաղադրիչների հաշվարկը կատարվում է տրանսպորտային նյութերի ծախսի նկատմամբ դրանց հարաբերակցությամբ:

12. Ավտոմեքենայի ընթացիկ նորոգման և պահպանման ծախսը տրանսպորտային նյութերի գծով տարեկան ծախսի նկատմամբ կազմում է 27% և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախս = ՏՆ x 27%:

13. Պարտադիր վճարների գծով ծախսը տրանսպորտային նյութերի գծով տարեկան ծախսի նկատմամբ կազմում է 1.15% և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Պարտադիր վճարներ = ՏՆx 1.15%:

14. Էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Է = ԷԾ x Օր x գին, որտեղ՝

Է՝ էլեկտրաէներգիայի տարեկան ծախսն է (դրամ),

ԷԾ՝ էլեկտրաէներգիայի միջին օրական ծախսը (կվտ),

Օր՝ աշխատանքային օրերի քանակը:

15. Էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի պահպանման բազային ծախսի մյուս ծախսային բաղադրիչների հաշվարկը կատարվում է էլեկտրաէներգիայի ծախսի նկատմամբ դրանց հարաբերակցությամբ:

16. Էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի յուղերի և այլ նյութերի (ապրանքների) ձեռքբերման ծախսը էլեկտրաէներգիայի ծախսի նկատմամբ կազմում է 10% և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ԷՆ = Է x 10%, որտեղ՝

ԷՆ-ն՝ էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի յուղերի և այլ նյութերի (ապրանքների) ձեռքբերման տարեկան ծախսն է (դրամ),

Է-ն՝ էլեկտրաէներգիայի տարեկան ծախսն է (դրամ):

17. Էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի ընթացիկ նորոգման և պահպանման ծախսը էլեկտրաէներգիայի ծախսի նկատմամբ կազմում է 12% և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախս = Է x 12%, որտեղ՝

Է-ն՝ էլեկտրաէներգիայի տարեկան ծախսն է (դրամ):

18. Էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի պարտադիր վճարների գծով ծախսը էլեկտրաէներգիայի ծախսի նկատմամբ կազմում է 1.5% և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Պարտադիր վճարներ = Է x 1.5%, որտեղ՝

Է-ն՝ էլեկտրաէներգիայի տարեկան ծախսն է (դրամ):

19. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսելու նպատակով ավտոմեքենայի պահպանման բազային ծախսը որոշվում է սույն հավելվածով սահմանված նորմաներին համապատասխան տարբերակված սկզբունքով՝ ըստ օգտակար ծառայության ժամկետի հաշվարկված պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշները (այսուհետ՝ պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշը) դեպի վերև կլորացնելու միջոցով:

20. Ավտոմեքենաների պահպանման փաստացի ծախսերում առանձին ծախսային բաղադրիչների գծով ծախսերի հարաբերակցությունը կարող է տարբերվել պահպանման բազային ծախսի հաշվարկում կիրառվող համամասնություններից՝ ըստ անհրաժեշտության: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան ծրագրային միջոցառումների գծով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերի բաշխումը կատարվում է՝ հիմք ընդունելով համապատասխան մարմնի կողմից բյուջետային ֆինանսավորման հայտով ներկայացված առաջարկը:

21. Հանրային իշխանության առանձին մարմինների գործառութային առանձնահատկություններով պայմանավորված՝ այդ մարմիններին հատկացված ավտոմեքենաների պահպանման ծախսերի հաշվարկման նպատակով տարբերակված սկզբունքով՝ ըստ օգտակար ծառայության ժամկետի հաշվարկված պահպանման

բազային ծախսի հաշվարկային ցուցանիշների նկատմամբ կիրառվում է բազմապատիկ գործակից՝ առավելագույնը 1.4 գործակցի չափով:

22. Բազմապատիկ գործակից կիրառելու դեպքում տվյալ մարմնի ավտոմեքենաների պահպանման բազային ծախսի չափը որոշվում է տարբերակված սկզբունքով՝ ըստ օգտակար ծառայության ժամկետի հաշվարկված պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշների և բազմապատիկ գործակցի արտադրյալը դեպի վերև կլորացնելու միջոցով:

23. Պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշի նկատմամբ 1.2 բազմապատիկ գործակից կիրառվում է հետևյալ մարմինների համար՝

1) Ազգային անվտանգության ծառայություն.
2) Արտաքին հետախուզության ծառայություն.
3) Պետական վերահսկողական ծառայություն.
4) Ոստիկանություն.
5) Փրկարար ծառայություն.
6) Քրեակատարողական ծառայություն.
7) Էկոպարեկային ծառայություն.
8) Հակակոռուպցիոն կոմիտե.
9) Քննչական կոմիտե.
10) Դատախազություն.
11) Մարզպետների աշխատակազմեր:

24. Պահպանման բազային ծախսի հաշվարկային ցուցանիշի նկատմամբ 1.4 բազմապատիկ գործակից կիրառվում է հետևյալ մարմինների համար՝

1) Պաշտպանության նախարարություն.
2) Զինված ուժերի գլխավոր շտաբ.
3) Պետական պահպանության ծառայություն:

25. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում հանրային իշխանության մարմինների համար ավտոմեքենաների տարեկան պահպանման ծախսերը հաշվարկվում և նախատեսվում են միասնական սկզբունքով՝ հիմք ընդունելով սույն հավելվածով սահմանվող նորմաներին համապատասխան՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաշվարկվող պահպանման բազային ծախսի չափերը՝ ըստ ավտոմեքենաների օգտակար ծառայության ժամկետների:

26. Պահպանման բազային ծախսի չափերը, ըստ ավտոմեքենաների օգտակար ծառայության ժամկետների, վերահաշվարկվում են առաջիկա տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվարկային տվյալների փոփոխությունները:

27. Առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում նախատեսելու նպատակով ավտոմեքենաների պահպանման հետ կապված ծախսերը վերահաշվարկվում են ըստ պահպանման բազային ծախսի վերահաշվարկված չափերի:

28. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առանձին մարմինների պահպանման ծախսերում նախատեսվող ավտոմեքենաների պահպանման ընդամենը ծախսերը հաշվարկում են բյուջետային ֆինանսավորման հայտով ներկայացված թվով ավտոմեքենաների համար, բայց ոչ ավելի, քան տվյալ մարմնի ավտոմեքենաների սահմանաքանակը:

29. Սույն հավելվածով սահմանված նորմաներին համապատասխան հաշվարկվող պահպանման բազային ծախսի չափերը համարվում են առավելագույն ցուցանիշներ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում հանրային իշխանության մարմինների ավտոմեքենաների պահպանման ծախսերի հաշվարկման և նախատեսման համար:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ